

բելու գրիչ ձեռագրիս՝ այն մեծ նմանութիւնն, որ կայ Կրաֆորդեան եւ այս ձեռագիրներու գրերու մէջ: Ըստ ամենայնի մէկ գրիչ եւ մէկ նկարագիր կը մատնանշեն երկու ձեռագրացս ալ գրութիւնք. այս տարբերութեամբ միայն, որ Կրաֆորդեան Ձեռագիրն աւելի մեծ բոլորգրով գրուած է քան մեր թ. 684ը (Կրաֆորդեան Ձեռագրին մեծութիւնն է 20.5×15.5 cm):

Երկրորդ Ձեռագիր մ'ալ ունէինք աչաց առջեւ Մատենադարանիս թ. 663 Տաղարանը, որուն նկարագրութիւնն է.

Թուղթը՝ այժմ 100: — Մեծութիւն՝ 15×10.5 սմ.: — Գրութիւն՝ միասին 10×6 սմ.: — Տողը՝ 15: — Թերթը՝ այժմ ԺԲ: — Նիւթ՝ թուղթ հաստ եւ ողորկեալ, դեղնագոյն: — Կազմ՝ շատ հին, ինկած են այժմ կողերը: — Հանգամանք՝ շատ խեղճ. քայքայուած, բաժնուած եւ ինկած են շատ թերթեր եւ թղթեր: — Գիր՝ ռոտր: — Զարդագիրք՝ ամէն ոտանաւորի սկիզբը: — Խորագիրք՝ Կարմրագիր. տնատառք են կարմիր եւ մանուշակ գրերով: — Ժամանակ՝ անյայտ, ԺԷ—ԺԸ դար հաւանականաբար: — Գրիչն Յովհաննէս (Թղ. 86բ): Ստացիչն՝ Աստուածատուր (Թղ. 67բ): — Տեղի՝ անյայտ: — Կը ըովանդակէ գլխաւորաբար Գրիգոր Աղթամարցւոյ տաղերը:

Բացի այս երկու տաղարաններէն գործածած ենք նաեւ Մատենադարանիս թ. 405 եւ թ. 577